ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

" 12 " նոյեմբերի 2012թ. № 121-Ա

«ՏԵՂԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՌԱՋՆԱՅԻՆ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2011թ. հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերությունների գործադիր մարմինների ընտրության (նշանակման) մրցութային կարգը հաստատելու մասին» N 145-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 70-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության տակ գտնվող հարյուր տոկոս՝ պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող «Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2012թ. նոյեմբերի 8-ի <<Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին>> N 3 որոշումը և եզրակացությունը, **կ ա ր գ ա դ ր ում եմ՝**

1. Սուսաննա Սմբատի Հայրապետյանին 2012թ. նոյեմբերի 12-ից նշանակել «Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ տնօրենի պաշտոնում, ազատելով նրան տնօրենի պաշտոնակատարի պարտականություններից:

Հիմք. «Տեղի առողջության առաջնային պահպանման կենտրոն» ՓԲԸ տնօրենի թափուր պաշտոնի համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2012թ. նոյեմբերի 8-ի <<Մրցույթի արդյունքում հաղթող ճանաչելու մասին >> N 3 որոշումը և եզրակացությունը, Ս. Հայրապետյանի անձնական դիմումը:

2. Ս. Հայրապետյանի հետ կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

3. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավար Ռ. Ղազարյանին՝ ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ.նոյեմբերի 12
ք. Կապան